ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի պատմությունը

ՀՀ կառավարության 2000 թվականի օգոստոսի 16-ի թիվ 485-Ն որոշմամբ **Հ**այաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության բարձրագույն դպրոցը վերանվանվեց **Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիա,** որի կառուցվածքային ստորաբաժանումներից էր նաև գիտական աշխատանքների բաժինը: Այն իրականացնում էր ոստիկանության ակադեմիայի ստորաբաժանումների և աշխատակիցների գիտահետազոտական գործունեության հեռանկարային և ընթացիկ պլանավորումը, կազմակերպումը և կատարման հսկողությունը, ղեկավարում էր ակադեմիայի գիտամանկավարժական կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման գործընթացի կազմակերպման և պլանների կատարման վերահսկման աշխատանքները, կազմակերպում և վերահսկում էր ասպիրանտների, հայցորդների ընդունելության, ուսումնառության աշխատանքները, ինչպես նաև օժանդակում էր ակադեմիայի և Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև արտասահմանի ոստիկանական և իրավաբանական բուհերի, գիտահետազոտական հաստատությունների միջև գիտամանկավարժական համագործակցության աշխատանքների իրականացմանը:

2006 թվականի նոյեմբերի 9-ին ընդունվեց ««Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական ոչ առեվտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 1791-Ն որոշումը, որը 2010, 2011, 2012, 2014 թվականներին ենթարկվեց փոփոխությունների, սակայն ամենակարևորագույն փոփոխությունը տեղի ունեցավ ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի թիվ 615-Ն որոշմամբ, որով Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպվեց Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր պետական ոչ առևտրային կազմակերպության:

Այս տարիների ընթացքում գիտական աշխատանքների բաժինը ևս ենթարկվել է բազմաթիվ կազմ-հաստիքային փոփոխությունների, մասնավորապես՝ ՀՀ ոստիկանության պետի 05.08.2006թ. թիվ 1298–Ա հրամանով կրճատվել է ասպիրանտուրայի և կադրերի գիտաակադեմիական որակավորման խումբը: ՀՀ ոստիկանության պետի 24.11.2009 թ. թիվ 3003–Ա հրամանով ստեղծվել է գիտամեթոդական և գիտահետազոտական բաժանմունք և գիտամանկավարժական կադրերի պատրաստման խումբ, իսկ ՀՀ ոստիկանության պետի 22.07.2011թ. թիվ 1871–Ա հրամանով վերափոխվել է գիտահետազոտական աշխատանքների և գիտամանկավարժական կադրերի պատրաստման բաժանմունքի ու գիտամեթոդական և գիտահրատարակչական խմբի:

ՀՀ կառավարության 2010 թ. հուլիսի 15-ի թիվ 892-Ն որոշմամբ ՀՀ ոստիկանության պետի 02.03.2012թ. թիվ 878–Ա հրամանով գիտական աշխատանքների բաժնում ստեղծվել է թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության, թմրամոլության կանխարգելման հետ կապված հարցերի ուսումնասիրող խումբը: ՀՀ ոստիկանության պետի 27.06.2013թ. թիվ 2123–Ա հրամանով կրճատվել է գիտահետազոտական աշխատանքների և գիտամանկավարժական կադրերի պատրաստման բաժանմունքն ու գիտամեթոդական և գիտահրատարակչական խումբը:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի 2016 թվականի մարտի 25-ի թիվ 137-Ա հրամանով հիմնադրվեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիրը, որի ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված էր ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և գիտությամբ զբաղվող ուսանողների կողմից գիտական ակտիվ գործունեությամբ, ինչպես նաև հայրենական, այնպես էլ արտասահմանյան երկրների առաջադեմ և հեղինակավոր քաղաքացիական, ոստիկանական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցությամբ: Նշված հրամանի 1-ին հավելվածի 4-րդ կետով սահմանվեց, որ գիտական աշխատանքների բաժինը հանդիսանում է ամսագրի խմբագրությունը:

2018 թվականի դեկտեմբերից **ամսագիրն ընդգրկված է ատենախոսությունների հիմնական արդյունքների եվ դրույթների հրատարակման համար ՀՀ ԿԳՆ բարձրագույն որակավորման կոմիտեի համար ընդունելի գիտական հրատարակությունների ցանկում:**